ԿԱՐԾԻՔ

Արայիկ Ռոբերտի Ֆիրյանի՝ «Սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանական պաշտպանության առանձնահատկությունները և զարգացման հնարավորությունները (Արցախի օրինակով)» թեմայով

ԺԹ.00.03 Սոցիալական հոգեբանություն (միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, տարիքային, մանկավարժական, խմբային գործունեություն) մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսական աշխատանքի մասին

Հայ հասարակության արդի իրականությունում առաջնային է առկա սոցիալ-տնտեսական քաղաքական ճգնաժամերից, բնական ազդեցություններից, արտակարգ իրավիճակներից առաջացած անձի հոգեբանական պաշտպանության հիմնախնդրի ուսումնասիրությունը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հետպատերազմյան շրջանում ազգաբնակչության մի մեծ զանգված անսպասելի դարձավ սահմանամերձ գոտու բնակիչ, հոգեբանական պաշտպանության մեխանիզմները ենթարկվեցին լուրջ փորձությունների՝ բախվելով նորմալ կենսագործունեության անհնարինության, արժեքային ճգնաժամի առաջացման հետ: Նման իրավիճակներում հոգեբանական պաշտպանության մեխանիզմների զարգացումը դառնում է հրատապ խնդիր:

Անձի հոգեբանական պաշտպանությունը ապահովում է նորմալ սոցիալ-հոգեբանական կենսագործունեության պայմաններ: Սահմանամերձ գոտում բնակվող մարդու համար, հատկապես լարված, անորոշ պայմաններում, հոգեբանական պաշտպանությունը դառնում է հոգեկան առողջության պահպանման կարևորագույն գործոն: Դրա հետ մեկտեղ, հոգեբանական պաշտպանության մեխանիզմները, սերտ կապ ունենալով անձի հարմարման մեխանիզմների և արժեքային կողնորոշումների հետ, կարող են ցուցաբերել աճի և նահանջի անկանխատեսելի ցուցանիշներ վերը նշված հանգմամանքներում՝ պատերազմ, անկանխատեսելի սոցիալ-քաղաքական զարգացումներ, կյանքին անմիջականորեն սպառնացող վտանգ և այլն:

Սահմանամերձ գոտու բնակչությունը, տարիներով ապրելով այդ հանգամանքների ներքո, զարգացրել է հոգեբանական պաշտպանության յուրատիպ

մեխանիզմներ: Ատենախոսին հետաքրքրել է նման պայմաններում սոցիալ-հոգեբանական հետազոտության համատեքստում անձի հոգեբանական պաշտպանությունների փոփոխության օրինաչափությունների բացահայտումը և այդ հիմքով զարգացման արդյունավետ, հավաքական մոդելի առաջադրումը :

Ըստ հեղինակի, հոգեբանական պաշտպանության հիմքում ընկած են անձի կենսակայունության բաղադրիչները: Կենսակայունությունն, իր հերթին, դրսևորվում է արժեհամակարգի այնպիսի բաղադրամասերով, ինչպիսիք են ինքնավերահսկումը և անկախությունը: Այս փաստը օրինաչափ է տևական ժամանակ սահմանամերձ գոտում բնակվող անձի նորմալ կենսագործունեության ապահովման համար:

Արտակարգ իրավիճակները, աղետներն ուղղորդվում են սթրեսային հոգետրավմատիկ իրավիճակներով, ինչը ենթադրում է ուղիղ վտանգ մարդու հոգեբանական պաշտպանության և առկա արժեհամակարգի կայունության համար՝ առաջացնելով սոցիալական միջավայրում գոյատևման պայմանների անսպասելի և կտրուկ փոփոխություններ:

Արտակարգ, անկանխատեսելի տարբատեսակ իրավիճակներով պայմանավորված սոցիալ-հոգեբանական ազդեցությունները չեզոքացնելու համար առաջ են գալիս անձի հոգեբանական պաշտպանության մեխանիզմները զարգացնելու տարբեր ուղիներ, որոնց ուսումնասիրման և նվիրված է տվյալ ատենախոսությունը:

Ատենախոսը հետազոտության արդիականությունը հիմնավորում է ներկա փուլում առկա սոցիալ-քաղաքական, աննախադեպ իրողությունների, հասարակական ճգնաժամի, հետպատերազմյան իրավիճակներում բնակչության հարմարվողականության, ադապտացիայի մեխանիզմների, տագնապայնության, հետտրավմատիկ ռեակցիաների պատճառահետևանքային կապերի և առանձնահատկությունների վերհանումով և վերլուծումով:

Հեղինակը հետազոտել և վերլուծել է արտակարգ իրավիճակներում անձի սոցիալ-հոգեբանական ադապտացիայի ուսումնասիրման գիտատեսական հիմքերը,

ադապտացիայի մեխանիզմները, սոցիալական ադապտացիայի բնութագրումները և անձի հոգեբանական ռեսուրսների բաղադրատարրերը: Առանձնացրել դրանց համահարաբերակցությունը սոցիալական ադապտացիայի միջավայրում:

Ատենախոսն առաջնային է համարում սահմանամերձ գոտում անձի հոգեբանական պաշտպանության եզրույթի տեսական մեկնաբանությունները, դրա կապը անձի ինքնահիրացման և կենսակայուն գործունեության հետ:

Հետազոտողի հիմնական նպատակն է ներկայացնել և բազմակողմանի վերլուծության ենթարկել սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանական պաշտպանության մեխանիզմների դրսևորման առանձնահատկությունները, առաջադրել սահմանամերձ գոտու ազգաբնակչության շրջանում կենսակայունության ցուցանիշների բարձրացում և արժեքային համակարգի բաղադրատարրերում դրանց ամրակայումն ապահովող հոգեբանական պաշտպանության մեխանիզմների կումուլյացիայի հայեցակարգ:

Հեղինակը հատկապես կարևորում է սահմանամերձ գոտու՝ որպես կոնֆլիկտածին միջավայրի շեշտադրումը, և այդ հիմքով ազգաբնակչության մոտ յուրատիպ ինքնագիտակցական մեխանիզմների առկայությունը:

Ատենախոսը յուրովի տարանջատում է սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանական պաշտպանությունների էությունը, բաղադրատարրերը, դրանց տեղն ու դերը նախապատերազմյան և հետպատերազմյան գործընթացներում:

Սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանական պաշտպանության առանձնահատկությունների ուսումնասիրության ընթացքում ատենախոսը փորձարարական հետազոտությունը կատարելու համար ընդգրկել է ՀՀ և Արցախի Հանրապետության տարածքում բնակվող մեծաթիվ փորձարկվողներ, տարանջատել տարիքային երեք խմբեր՝ բաժանել ընտրախմբերի փուլերի և դասակարգել: Ա. Ֆիրյանը փորձարկվողների հոգեբանական պաշտպանության մեխանիզմների առանձնահատկությունները բացահայտելու համար կատարել է եռափուլ

հետազոտություն: Առաջին և երկրորդ փուլերը իրականացվել են մինչև 2020թ. օգոստոսը, իսկ հետազոտության 3-րդ փուլում հաշվի է առնվել նոր իրողությունը, այն է՝ ՀՀ տարածքի որոշ շրջանների սահմանամերձ դառնալու փաստը և, որպես տրամաբանական հետևություն, այնտեղի ազգաբնակչության հոգեբանական պաշտպանության մեխանիզների վրա այդ իրողության ազդեցության ուսումնասիրությունը:

Կիրառելով բազմամարտկոց մեթոդական ապարատ ատենախոսը հանգում է սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանական պաշտպանության մեխանիզմների, կենսակայունության և արժեքային համակարգի միջև եղած կապի առկայությանը: Հետազոտությունից պարզ է դառնում, որ հետպատերազմյան շրջանում, պայմանավորված անորոշ, լարված հանգամանքներով, բնակչության մի մասի տարհանման, մշտական բնակության վայրի կորստով, թշնամու՝ անմիջական հարևանությամբ հայտնվելու փաստով, հոգեբանական պաշտպանության մեխանիզմները նահանջ են ապրել, բարձրացել է բնակչության տագնապայնության աստիճանը:

Հետազոտական աշխատանքը կազմված է 3 գլխից և 9 ենթագլուխներից: Աշխատանքը հարուստ է աղյուսակներով և գծապատկերներով, ինչն առավել պատկերավոր է դարձնում անձի հոգեբանական պաշտպանության մեխանիզմների, կենսակայունության և արժեհամակարգի համահարաբերակցության ուսումնասիրության ընթացքը: Երևում է, որ իրականացվել է լուրջ, երկարատև և բազմակողմանի աշխատանք: Այնուամենայնիվ, հարկ ենք համարում նշել, որ կան որոշակի հարցեր.

1 Կցանկանայինք մանրամասն լսել հեղինակի բացատրությունը կոմպենսացիայի և ռացիոնալիզացիայի պաշտպանական մեխանիզմների փոփոխության վերաբերյալ՝ մինչև պատերազմը և հետպատերազմյան շրջանում:

2 Ինչպե՞ս է ատենախոսը պատկերացնում հոգեբանական պաշտպանության մեխանիզմների վերընթաց մոդելի կիրառումը հետպատերազմյան շրջանում սահմանամերձ գոտու ազգաբնակչության շրջանում:

3. Մեկնաբանման կարիք ունի այն հանգամանքը, թե կարող է արդյոք վերջնական լինել հոգեբանական պաշտպանության զարգացման կումուլյատիվ մոդելի համապատասխանեցումը հետպատերազմյան իրականությանը, քանի որ ազգաբնակչության շրջանում առկա են հետտրավմատիկ ուժեղ հակազդումներ:

Նշված դիտարկումները չեն նսեմացնում աշխատանքի գիտական արժեքը, քանի որ ատենախոսն իրականացրել է իսկապես մեծածավալ տեսական և փորձարարական հետազոտություն, որը ունի կիրառական մեծ նշանակություն:

Ատենախոսությունը ավարտուն, գիտական պատշաճ, գրագետ մակարդակով գրված հոգեբանական աշխատություն է, իր բովանդակությամբ և ձևակերպումներով համապատասխանում է ԲՈՀ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակը՝ Արայիկ Ռոբերտի Ֆիրյանն արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի աստիճանի շնորհմանը՝ ԺԹ.00.03 Սոցիալական հոգեբանություն (միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, տարիքային, մանկավարժական,խմբային գործունեություն) մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս

հոգեբանական գիտությունների թեկնածու, ասիստենտ՝

Ի.Ա.Ղազարյան

Ի.Ա.Ղազարյանի ստորագրությունը հաստատում եմ

ԵՊՀ Գիտքարտուղար՝ .....

16.09.2021թ.